

Որակի հոչակագիր Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ներմուծման միջին գների (միջին արժեքի) ինդեքս
0.2	Ոլորտը	Արտաքին առևտուր
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Բաժնի պետ Մարիամ Երիցյան Գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժին Հայաստանի Հանրապետություն, 0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք 3, Հեռախոս՝ +374 11 564 566 Էլ. Փոստ: price@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Տարբեր հաշվարկների և վերլուծությունների ժամանակ արտաքին առևտրի գների ինդեքսի կիրառումը հնարավորություն է տալիս որոշել ներմուծման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում: Այս առումով կարևոր նշանակություն ունի արտաքին առևտրի գների վիճակագրությունը: Ներմուծման ապրանքների գների մակարդակի և դինամիկայի ուսումնասիրման համար կիրառվում է ինդեքսային մեթոդը: Արտաքին առևտրի բնագավառում կարևոր ցուցանիշ է արտաքին առևտրի գների կամ միավորի արժեքի ինդեքսը: Ցուցանիշի հաշվառումը վարվում է 1997 թվականից:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, Կենտրոնական բանկը, միջազգային կազմակերպությունները և այլն: Ներմուծման ապրանքների գների ինդեքսը կիրառվում է ազգային հաշիվներում որպես դեֆլյատոր, ինչպես նաև արտաքին առևտրի առևտրաշրջանառության (ներմուծման) հաստատուն գներով ֆիզիկական ծավալի հաշվարկման համար:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեին յուրաքանչյուր ամիս տրամադրվում է տեղեկատվություն ՀՀ արտաքին և փոխադարձ առևտրի (առևտուր միայն Հայաստանի Հանրապետության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) երկրների միջև) ծավալների մասին: Ներմուծման ապրանքների գների կամ ներմուծման միավորի արժեքի ինդեքսների հաշվարկի համար որպես տվյալների սկզբնաղբյուր են հանդիսանում իրավաբանական և ֆիզիկական անձանց բեռնամաքսային հայտարարագրերը (ղեկյարացիաները):

0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և հաշվետու տարվա «Վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Ներմուծման ապրանքների գների ինդեքսը բնութագրում է ներմուծման ապրանքների գների փոփոխման հաշվին ներմուծման արժեքի փոփոխությունը՝ անփոփոխ, հաստատուն ֆիզիկական ծավալի պայմաններում:</p> <p>Ժամանակագրական համադրելիության առումով ներմուծման միջին գների ինդեքսները հաշվարկվում են հետևյալ կտրվածքներով՝</p> <ul style="list-style-type: none"> • հաշվետու ամիսը (եռամսյակը) նախորդ ամսվա (եռամսյակի) նկատմամբ, • հաշվետու ամիսը (եռամսյակը) նախորդ տարվա համապատասխան ամսվա (եռամսյակի) նկատմամբ, • հաշվետու ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, • աճողական կարգով (նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ), • հաշվետու ամիսը (եռամսյակը) նախորդ տարվա նկատմամբ: • հաշվետու ամիսը բազիսային տարվա նկատմամբ:
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Համակցություն</p> <p>Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրում ներմուծման մասը կազմող ներմուծման ծավալների (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) մասին տեղեկատվությունն է:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկվում է Հայաստանի Հանրապետության ողջ տնտեսական տարածքը, ինչը համապատասխանեցված է նրա մաքսային տարածքին:</p> <p>Ապրանքի ընդգրկունություն</p> <p>Ինդեքսների հաշվարկին մասնակցող ապրանքների ընդգրկունակությունը պայմանավորված է բազիսային տարում ներմուծված ապրանքների համակցությամբ և կիրառվող սահմանային գործակիցներով:</p>

	<p>Փոփոխականներ</p> <p>Գին. ապրանքների գնային ցուցանիշները ստացվում են բեռնամաքսային հայտարարագրերի տեղեկատվական բազայում գոյություն ունեցող ապրանքի քանակի և արժեքի մասին տվյալների հիման վրա:</p> <p>Միավորի արժեքի գին. ապրանքի արժեքի և քանակի հարաբերությունն է, որտեղ ապրանքի ամենացածր դետալացման (մանրամասնելու) պայմաններում անգամ կարող են երկու կամ մի քանի որակապես տարբեր ապրանքներ դասակարգված լինել միևնույն 10 նիշ ծածկագրով:</p> <p>Սահմանային գործակիցներ. գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ:</p> <p>Այն ապրանքները, որոնք ունեն հաշվարկված սահմանային գործակցից ավելի գնային տատանումներ՝ (նվազման կամ աճման միտումով), այսինքն միջին արժեքի փոփոխությունները (ինդեքսները) դուրս են մնում այդ միջակայքերից, չեն մասնակցում հետագա հաշվարկներին: Ինդեքսի թույլատրելի վերին և ստորին սահմանները որոշվում են առանձին ապրանքների գների միջին կշռված քառակուսային շեղումների և դրանց հիման վրա հաշվարկված տատանման (վարիացիոն) գործակիցների օգնությամբ (միջոցով):</p> <p>Կշիռների սկզբնաղբյուրներ. ինդեքսների ագրեգացման համար կշիռների սկզբնաղբյուր են հանդիսանում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ՀՀ վիճակագրական կոմիտեին տրամադրվող տեղեկատվությունը ՀՀ արտաքին առևտրի ներմուծման ծավալների մասին:</p> <p>Վիճակագրական չափորոշիչներ</p> <p>Ինդեքսների ամենացածր մակարդակն Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ (ԱՏԳԱԱ) դասակարգչի ապրանքներն են, որոնց միջին արժեքի ինդեքսները կշռվելով ագրեգացվում են ըստ ապրանքային ենթախմբերի, ապրանքային խմբերի և 21 ապրանքային բաժինների:</p> <p>Ներմուծման գների ինդեքսի հաշվարկի համար կիրառվում է Լասպեյրեսի բանաձևը:</p> <p>Խմբավորումներ</p> <p>Արտաքին առևտրի ներմուծման միջին գների ինդեքսը հաշվարկվում է՝ ընդամենը - բոլոր երկրներ, ԱՊՀ երկրներ, Այլ</p>
--	---

		<p>երկրներ, այդ թվում՝ Եվրամիության երկրներ ուղղություններով, իսկ փոխադարձ առևտրի ներմուծման միջին գների ինդեքսը հաշվարկվում է միայն ՀՀ-ի և ԵԱՏՄ, ոչ ԵԱՏՄ, առանձին ԵԱՏՄ երկրների միջև ուղղություններով: Նշված յուրաքանչյուր ուղղություն հաշվարկվում է ԱՏԳԱԱ դասակարգչի ապրանքներ, ապրանքային ենթախմբեր, ապրանքային խմբեր, ապրանքային բաժիններ խմբավորումներով:</p> <p>Հրապարակման ձևաչափեր</p> <p>Ներմուծման միջին գների ինդեքսները հրապարակվում են ըստ ԱՏԳԱԱ դասակարգչի 21 բաժինների, ուղղությունների (ինչպես նաև փոխադարձ առևտրում՝ ըստ ԵԱՏՄ երկրների):</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Ամսական
2.2	Հրապարակման ամսաթիվը	Ամսական տվյալները հրապարակվում են հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 35/36-րդ օրը:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Ամսական
3. Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	<p>Ապրանքների գնային ցուցանիշները ստացվում են բեռնամաքսային հայտարարագրերի հիման վրա: Սակայն դրանց ամենացածր դետալացման (մանրամասնեցման) դեպքում էլ երկու կամ մի քանի որակապես տարբեր ապրանքներ դասակարգվում են միևնույն 10 նիշ ծածկագրով: Քանի որ միավորի արժեքի ինդեքսն ընդունակ չէ ամբողջությամբ արտահայտելու ապրանքի որակական փոփոխությունը, առաջ են գալիս գնային տատանումներ: Գնային այդպիսի փոփոխությունները, կապված ապրանքի որակական հասկանիշների փոփոխությունների հետ (ոչ միատարրության պատճառով), բերում են ներմուծման ապրանքների գների ինդեքսների որոշակի արհեստական շեղման: Հետևաբար անհրաժեշտություն է առաջանում ծայրահեղ գնային փոփոխություններով ապրանքները դուրս թողնել ինդեքսների հաշվարկից: Նման կարգի գնային մեծ շեղումներից խուսափելու համար օգտագործվում է ինդեքսների շարքի վերին և ստորին թույլատրելի սահմանների հարթեցման մեթոդը՝ սահմանային գործակիցների կիրառմամբ:</p>
3.2	Անճշտության աղբյուրները	<p>Անճշտության աղբյուր կարող են լինել.</p> <ul style="list-style-type: none"> Մաքսային գործակալի կողմից ներմուծվող ապրանքի սխալ ծածկագրումը:

		<ul style="list-style-type: none"> • ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ներկայացվող տեղեկատվական բազայում, բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների սխալ մուտքագրումը:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	Ճշգրտության չափումներ չեն իրականացվում:
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Ցուցանիշի հաշվառումը վարվում է 1997 թվականից՝ եռամսյակային կտրվածքով: 2007 թվականից ներմուծման միջին գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը կատարելագործվել է և հաշվարկվում է ամսական պարբերականությամբ: Ներմուծման գների ինդեքսների համար որպես բազիսային տարի և կշիռների հիմք ընդունվում է նախորդ տարին:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվում է միայն մեկ ներմուծման միջին գների ինդեքս, ուստի այն համադրելի չէ այլ գնային ինդեքսների հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Հրապարակված տվյալները համարվում են վերջնական, եթե ՀՀ պետական եկամուտների կոմիտեի մաքսային ծառայության կողմից ճշգրտումներ չեն կատարվում:
5 .Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>Ամսական, եռամսյակային հրապարակումներ</p> <p>«Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական, եռամսյակային զեկույց (հայերեն, ռուսերեն):</p> <p>Տարեկան հրապարակումներ</p> <p>«Գները և գների ինդեքսները ՀՀ-ում» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p>«Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն, անգլերեն):</p> <p>«Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն, անգլերեն):</p> <p>Ինտերնետային հասցե</p> <p>Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>

		Ամսական և պատմական տվյալները հասանելի են հայերեն, անգլերեն լեզուներով, հետևյալ հասցեով. https://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6&rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6 :
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	Ինդեքսների վարման օրվանից տեղեկատվական բազաները պահպանվում են էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային շտեմարանները ներառում են իրավաբանական և ֆիզիկական անձանց բեռնամաքսային հայտարագրերի վերաբերյալ տեղեկատվությունը:
5.3	Փաստաթղթավորումը	Մեթոդաբանության պարզաբանումները հասանելի են «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, Էլեկտրոնային տարբերակով Արմստատի պաշտոնական կայքում՝ http://www.armstat.am/ :
5.4	Այլ տեղեկատվություն	Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/file/model/am/21.3.pdf :
6. Լրացուցիչ փաստաթղթավորում		
6.1		Լրացուցիչ փաստաթղթեր հասանելի չեն: